«Հաստատում եմ»
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտորի ԺՊ՝ Ն. Վերոյան
« 29 » նոյեմբերի 2021թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության

Մելինե Արծրունի Գրիգորյանի «Ներառական կրթության կառավարման առանձնահատկությունները ՀՀ հիմնական դպրոցում» խորագրով թեկնածուական ատենախոսության մասին՝ ներկայացված է ԺԳ. 00.01 «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Մելինե Արծրունի Գրիգորյանի «Ներառական կրթության կառավարման առանձնահատկությունները ՀՀ հիմնական դպրոցում» թեմայով ատենախոսությունն անկասկած արդիական է, և այն պայմանավորված է ներառական կրթության համակարգի կատարելագործման, դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման, շտկման, զարգացման գործընթացների իրականացման կարևորությամբ, մանկավարժական նոր մոտեցումների մշակման անհրաժեշտությամբ, ինչպես նաև վերը նշված աշխատանքների արդյունավետության ապահովմամբ:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, սահմանված է հետազոտության նպատակը, որոշված են խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան, վարկածը, ներկայացված են հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները, հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, արդյունքների հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձարկումը: Ձևակերպված են ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները,

ներկայացված է ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Նշենք, որ հետազոտության բոլոր բաղադրիչները համապատասխանում են միմյանց:

Ատենախոսությունն առաջին՝ <<Հիմնախնդրի դրվածքը, հետազոտության խնդիրները, մեթոդները՝ ու կազմակերպումը>> գլխի առաջին ենթագլխում հեղինակը ներկայացնում է <<Ներառական կրթություն>> հասկացության սահմանումները, բնութագրում ներառական կրթության վեց առանձնահատկությունները, անդրադառնում ամբողջական ներառական ուսուցման համակարգի առանձին մոտեցումներին: Հաջորդ ենթագլխում դիտարկվում են Հայաստանում ներառական կրթության կայացման և զարգացման հիմնահարցերը, ներկայացված են ներառական կրթության ոլորտի կայացման և կարգավորման մեջ կարևորագույն ներպետական և միջազգային փաստաթղթերը, մեկնաբանվում են դրանցից մի քանիսի նշանակությունն ու կարևորությունն այդ գործընթացներում: Առաջին գլխի երրորդ ենթագլխում ատենախոսը քննարկում է ներառական կրթության կառավարման հիմնախնդիրները և դրանց ուսումնասիրվածության աստիճանը գիտամեթոդական գրականության մեջ: Այստեղ ներկայացված են տարբեր երկրներում ներառական կրթության գործընթացի իրականացմանը վերաբերող ուշագրավ ուսումնասիրություններ, որոնց արդյունքում հեղինակը փաստում է, որ այնուամենայնիվ շատ երկրներում ներառական կրթության կառավարմանը վերաբերող բազմաթիվ հարցեր դեռևս ուսումնասիրված չեն:

Աշխատանքի երկրորդ գլուխը կրում է <<ՀՀ հիմնական դպրոցներում ներառական կրթության կառավարման դրվածքի ուսումնասիրում>> խորագիրը, որը բաղկացած է երեք ենթագլխից, որտեղ ներկայացված են ներառական կրթության կառավարման օրենսդրական և իրավական կարգավորումները ՀՀ-ում, կատարվել են բազմակողմանի ուսումնասիրություններ և վերլուծություններ դպրոցում ներառական կրթության կառավարման աշխատանքների դրվածքը պարզաբանելու, այդ գործընթացի ինչպես դրական կողմերը, այնպես էլ բացթողումները բացահայտելու նպատակով: Նշենք, որ հետազոտության աշխարհագրությունը լայն է, հարցվողների թիվը բավարար հետազոտության շրջանակում առաջադրված խնդիրների, դրանց լուծման մասին պատկերացում կազմելու համար: Գնահատելի է ներառական կրթության կառավարման վերաբերյալ դպրոցների աշխատակիցների իրազեկվածության

մակարդակի բացահայտման նպատակով կատարված ուսումնասիրությունները, որոնք փաստում են, որ հարցվողների մեծամասնությունը դրական վերաբերմունք ունեն ներառական կրթության վերաբերյալ, սակայն ներառական կրթության կառավարման աշխատանքները գրեթե չեն իրականանում:

Ատենախոսության երրորդ գլխում, որը կրում է <<Ներառական կրթության կառավարման բարելավման տեսական մոտեցումները և գործնական ուղիները>> խորագիրը, տեսականորեն հիմնավորվում է հիմնական դպրոցի ներառական կրթության կառավարման բարելավման անհրաժեշտությունը, առանձնացվում են ուշադրության արժանի մի քանի հարցեր, որոնք քննարկման կարիք ունեն ներառական կրթություն իրականացնող դպրոցներում ընթացող տարբեր գործընթացներում: Հետազոտողն այս գլխում դիտարկում է ներառական կրթության գործընթաց իրականացնող հիմնական դպրոցի կառավարման պայմանները, մասնագետների փոխգործունեության էառավարման հիմնական ուղղությունները: Ուշագրավ են ԱՈՒԴ-ի նշանակությանն ու կարևորությանը վերաբերող ուսումնասիրությունները, որոնց միջոցով հնարավոր է դառնում առավել արդյունավետ կերպով իրականացնել ուսումնադաստիարակչական, շտկող-զարգացնող և այլ աշխատանքներ՝ յուրաքանչյուր աշակերտի կրթության իրավունքի ապահովման, իրացման շեշտադրմամբ:

Չորրորդ՝ <<Հետազոտության հիմնական ուղղվածությունը, խնդիրները և անցկացման փուլերը>> խորագիրը կրող ենթագլխում ատենախոսը ներկայացրել է հիմնախնդրի տարբեր տեսանկյունները, առաջադրել է մասնակի խնդիրներ, դրանց լուծման համար անհրաժեշտ տեսական և էմպիրիկ հետազոտության մեթոդները, հետազոտության իրականացման փուլերը:

Աշխատանքի եզրակացություններում արտահայտված են առաջադրված խնդիրների լուծումները:

Նշենք մի քանի նկատառումներ հետազոտական աշխատանքի իրականացման վերաբերյալ.

1. Ատենախոսության առաջին՝ <<Հիմնախնդրի դրվածքը, հետազոտության խնդիրները, մեթոդներն ու կազմակերպումը>> գլխի վերջին երկու ենթագլուխներում խոսվում է ներառական կրթության կառավարման

հիմնախնդիրների, գիտամեթոդական գրականության մեջ դրանց ուսումնասիրվածության, ինչպես նաև հետազոտության հիմնական ուղղվածության, հետազոտության խնդիրների և անցկացման փուլերի մասին, որոնց, կարծում ենք, կարելի էր անդրադառնալ հետազոտական աշխատանքի ներածությունում:

2. Այսօր դպրոցի փոխտնօրենի պաշտոնի անվանումը փոխարինվել է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ և մասնագիտական կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ անվանմամբ :
3. Աշխատանքում ներկայացված հղումները միանման չեն, որոշ հատվածներում ցանկալի էր նշել էջերը:
4. Աշխատանքում կան որոշ մտքերի կրկնություններ, տեխնիկական բացթողումներ:

Նշված նկատառումները չեն ստվերում կատարված գիտահետազոտական աշխատանքը, այն էական նշանակություն ունի մանկավարժության գիտության բնագավառում, մասնավորապես ներառական կրթության արդյունավետ կառավարման տեսանկյունից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մելինե Արծրունի Գրիգորյանի «Ներառական կրթության կառավարման առանձնահատկությունները ՀՀ հիմնական դպրոցում» խորագրով թեկնածուական ատենախոսությունը կլրացնի ներառական կրթության կառավարման տեսությունը նոր մոտեցումներով և առաջարկներով: Հետազոտական աշխատանքն օգտակար է ներառական կրթության կառավարման ոլորտի մասնագետների, դպրոցներում ներառական կրթության կազմակերպիչների, ուսուցիչների համար: Այն համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր՝ ԺԳ.00.01 (Մանկավարժության տեսություն և պատմություն) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է Մանկավարժության ամբիոնի 2021 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 08 նիստում:

Ամբիոնի նիստին մասնակցել են մանկ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ռ. Մարդոյանը, Ա. Մկոյանը, Ս. Սողոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Ն. Ադամյանը, Ա. Յայլոյանը, մանկ. գիտ. թեկնածու Լ. Միքաելյանը, Ն. Գրիգորյանը, Շ. Ալեքսանյանը, բանասիր. գիտ. թեկնածու Լ. Գևորգյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Լ. Բարդասարյանը, Ս. Համբարյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,

մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար Ե. Պետրոսյան